

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԵՐՆԵՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1973 տարւոյ ընթացքին
Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ
բարեպաշտական նուէրները:

1. Տկն. Լուսաբեր Սանտրունի, բնիկ Ատա-
նացի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ վարա-
գոյր մը Ս. Կոյս Վառվառէի պատկերին:

2. Տկն. Եղիսաբեթ Դանիէլեան, բնիկ Կե-
սարացի, Պոլսաբնակ, կը նուիրէ զանազան
գոյներով վեց սեղանի ծածկոց՝ յանձնուած
Ս. Հրեշտակապետաց Տեսուչ Հոգշ. Տ. Նա-
րեկ Վրդ. Մարֆագէլեանի, ի գործածութիւն
նոյն եկեղեցւոյ սեղաններուն:

3. Տկն. Արշալոյս Տարագնեան, բնիկ Տիգ-
րանակերտցի, Պէյրութաբնակ, կը նուիրէ ե-
րեք փուլու խաչի բոնիշներ Ս. Յակոբայ Տա-
ճարին:

4. Անդրանիկ Համբարձեան, Նոր Զուղա-
լեցի, Թեհրանաբնակ, կը նուիրէ զոյգ մը ար-
ծարթ փոքր աշտանակ Ս. Յակոբայ Մայր
Տաճարին:

5. Հագէսէն բարեպաշտունի Սալթի Թօփն-

եան դրկած է ճերմակ յատակի վրայ կապոյտ
ծաղիկներով եւ խաչերով քանուած սեղանի
ծածկոց մը:

6. Թեհրանէն հանգուցեալ Տկն. Հայկանուշ
Պապանի յիշատակին ողջութեան ըրած նը-
ւերը՝ Թեհրանաբնակ Պօղոս Պօղոսեանի
կողմէ՝ զոյգ մը յախճապակեայ ծաղկաման
եւ Աւետարանի տպածոյ բոնիշ մը Ս. Յակո-
բայ Տաճարին բերուեցաւ:

7. Տկն. Մարի Քէշիշեան, բնիկ Մարաշցի,
Պէյրութաբնակ, կը նուիրէ մութ կարմիր թա-
ւիշէ սկիֆի ծածկոց մը, ոսկեթել ծուպերով եւ
խրաչատուկ յիշատակարանով մը:

8. Տկն. Շաքէ Գալայնեան, բնիկ Մարաշ-
ցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ Ս. Գլխադ-
րի սեղանին ծածկոց մը կանաչ ապակիէ
խաչով եւ կանաչ ապակիէ եզերքով՝ իր փոք-
րիկ Յակոբիկի անուան տօնին ստիթով:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԳՈՎԵԼԻ ԱՐԱՐՔ ՄԸ

Տիար Յարութիւն Արամ Խաչատուրեան իր
բարեպաշտական եւ եկեղեցասիրական սո-
վորութեան համաձայն, այս տարի եւս, ոսկե-
զօծեց Ս. Յակոբայ Տաճարին դրան հրեշ-
տակներու թեւերը: Ոսկեզօծած է Ս. Հրեշտա-
կապետաց եկեղեցւոյն խորանին եւ աջ ու

ձախ գոնուող պատկերներու շրջանակները,
Զարչաբանաց սեղանի խաչկալը, ներկած է
արտաքին եւ ներքին դուռները, ոսկեզօծած
է դասերու վարդերը եւ մոմատան դուռը,
Տեսչարանի մուտքին դուռը եւ Տաճարին ա-
ռագ դուռը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Լուսարարապետ Ս. Աթոռոյ